Հայաստանի ամսեկան տնտեսական ակնարկ (մարտ, 2015)

- *2015 թ. հունվարին աճը շարունակում է դանդաղել՝ դրամական փոխանցումների և արտահանման նվազման պայմաններում*
- *Փոխարժեքի ճնշումները տեղի են տալիս՝ կապված ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության պայմանների խստացման և արտարժութային միջամտությունների հետ*
- *Գնաճային բարձր ճնշումները պահպանվում են*
- *2015 թ. բյուջեի կատարումը կարող է դժվար լինել, քանի որ այն ենթադրվում է մակրոտնտեսական լավատեսական շրջանակ*

Արտաքին անբարենպաստ միջավայրը պահպանվում է: Նավթի գնի վերջին ցնցումը և արևմտյան պատժամիջոցները ծանր հարված են հասցրել Ռուսաստանի տնտեսությանը և թուլացրել աճի հեռանկարները: Ռուսաստանի տնտեսության հեռանկարի վատթարացումն արտաքին առևտրի, դրամական փոխանացումների և ՕՈւՆ-ի միջոցով անդրադառնում է Հայաստանի վրա: 2014 թ. ապրանքների արտահանումը Ռուսաստան նվազել է 7.7 տոկոսով, իսկ դրամական փոխանցումների ներհոսքը կրճատվել է 10.7 տոկոսով: Հայաստանի արտահանման 45 տոկոսը կազմող ոչ ազնիվ մետաղների միջազգային պահանջարկը և գները ևս նվազման միտում են դրսևորում՝ այդպիսով նվազեցնելով արտահանումից եկամուտները:

2013 թ. վերջում թուլանալով՝ տնտեսության աճի տեմպը շարունակեց 2014 թ. դանդաղել մինչև շուրջ 3.4 տոկոս՝ նվազելով շինարարության պատճառով: 2014 թ. ծառայությունների աճը կազմեց 4.3 տոկոս և ՀՆԱ-ի աճին նպաստեց 2.2 տոկոսային կետով: Երկրորդ խոշոր նպաստն ունեցավ գյուղատնտեսությունը (1.4 տոկոսային կետ), քանի որ աշնան առատ բերքը առավել քան չեզոքացրեց մարտի վերջում տեղի ունեցած ցրտահարությունների բացասական ազդեցությունը, ինչը հանգեցրեց գյուղատնտեսության ոլորտում ստեղծված ավելացված արժեքի 7.8 տոկոս աճի: Սակայն շինարարության ճյուղում ձգձգվող անկումը և արդյունաբերության ճյուղի լճացումը սահմանափակեցին ընդհանուր աճը: Ընդհանուր առմամբ արդյունաբերության ճյուղը 2014 թ. անկում ունեցավ, քանի որ հանքարդյունաբերության ոլորտը կրճատվեց 5.8 տոկոսով՝ պայմանավորված մետաղական ապրանքների նկատմամբ ցածր պահանջարկով, իսկ էներգետիկայի ոլորտը կրճատվեց 15.1 տոկոսով: Նշված բացասական արդյունքները չեզոքացրեցին տնտեսական աճին մշակող արդյունաբերության դրական նպաստը (7.7 տոկոս):

2015 թ.-ին պահպանվում է ցածր աճի անցյալ տարվա միջավայրը: Տնտեսական ակտիվության ինդեքսը՝ խոշոր ճյուղերի տնտեսական աճի տեմպի կշռված միջինը (ծավալային արտահայտությամբ) և տնտեսական աճին փոխարինող ցուցանիշը, հունվարին (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) կազմել է համեստ՝ 1.3 տոկոս: Ծառայությունները (առանց առևտրի) արձանագրել են աճի

ամենաբարձր տեմպը (3.8 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ), որին հաջորդել են շինարարությունը (2.2 տոկոս) և գյուղատնտեսությունը (1.8 տոկոս): Արդյունաբերությունը վատ արդյունքներ է արձանագրել՝ 6.7 տոկոս անկման ցուցանիշով, իսկ էներգաարտադրությունը կտրուկ՝ 19.7 տոկոսով նվազել է: Թույլ ներքին տնտեսությունը և ավելի ցածր դրամական փոխանցումները խոչընդոտել են մասնավոր սպառումը, որն արտացոլվել է մանրածախ առևտրի 7.4 տոկոս կրճատման ցուցանիշում:

Հունվար ամսվա ընթացքում շարունակվեցին դրամի պահպանմանն ուղղված արտարժութային խոշոր միջամտությունները: 2014 թ. նոյեմբերից 2015 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում Կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) իրականացրեց 145.0 միլիոն ԱՄՆ դոլարի զուտ վաճառք՝ դրամին օժանդակելու նպատակով: Նշված միջամտությունների, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության պայմանների խստացման միջոցով հաջողվեց արժույթը կայունացնել: 2014 թ. վերջին 29.6 տոկոսով արժեզրկվելուց հետո փոխարժեքը կայունացված 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 475 ՀՀ դրամի շուրջ: Արդյունքում դրամը իրական արտահայտությամբ արժևորվեց 6.7 տոկոսով (2015 թ. հունվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ):

Գնաճային բարձր ճնշումները պահպանվում են: 12-ամսյա գնաճը փետրվարին կազմեց 5.4 տոկոս, որը մոտ է ՀՀ ԿԲ նպատակադրած 4 +/- 1.5 տոկոս միջակայքի վերին սահմանին: Գնաճը պայմանավորող խոշոր գործոնը պարենային գներն էին, որոնց աճը փետրվարին կազմեց 7.0 տոկոս (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) և 3.4 տոկոսային կետով նպաստեց 12-ամսյա գնաճին: Գնաճին նպաստող երկրորդ խոշոր գործոնը (1.2 տոկոսային կետ) ծառայություններն էին, որն արտացոլում էր 10 տոկոսով էլեկտրաէներգիայի սակագների բարձրացումը (որը ուժի մեջ էր մտել 2014 թ. օգոստոսին): Ոչ պարենային ապրանքների չափավոր գնաճի 12-ամսյա ցուցանիշի շնորհիվ (3.4 տոկոս 2015 թ. փետրվարին), 2015 թ. փետրվարին արձանագրվեց ավելի ցածր՝ 4.2 տոկոս կազմող 12-ամսյա բնականոն գնաճ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) գնաճային ճնշումների աճին զուգահեռ շարունակեց իր դրամավարկային քաղաքականության դիրքի խստացումը: 16-ամսյա ժամանակահատվածից հետո, որի ժամանակ վերաֆինանսավորման տոկոսադրույքը աստիճանաբար նվազեցվեց, ՀՀ ԿԲ դեկտեմբերի 23-ին այն բարձրացրեց 175 բազիսային կետով՝ մինչև 8.5 տոկոս՝ փոխարժեքի արժեզրկումից առաջացող գնաճային ճնշումների զսպման համար: 2015 թ. հունվար և փետրվար ամիսներին վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվեց ևս երկու անգամ (յուրաքանչյուրը՝ 100 բազիսային կետով)՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը հասցնելով 13 տարվա ընթացքում առավելագույն մակարդակի՝ 10.5 տոկոսի: 2014 թ. նոյեմբերից 2015 թ. հունվարի ընթացքում փոխարժեքի արժեզրկման և գնաճի արագացման հետևանքով վարկերի և ավանդների դոլարայնացումն աճեց համապատասխանաբար 3.2 և 3.8 տոկոսային կետով:

2015 թ. պետական բյուջեն հիմնված է լավատեսական մակրոտնտեսական շրջանակի վրա, ըստ որի ենթադրվում է 4.1 տոկոսի տնտեսական աճ, 4.0 տոկոս գնաճ, ապրանքների արտահանման և ներմուծման համապատասխանաբար 5.2 և 3.7 տոկոս աճ: Այս ենթադրությունների ներքո հարկային եկամուտները (ավելացված արժեքի հարկի վերադարձը հանած) կպահպանվեն ՀՆԱ-ի 22.8 տոկոս մակարդակում, իսկ բյուջեի դեֆիցիտը՝ ՀՆԱ-ի 2.3 տոկոսում: Ընթացիկ ծախսերը կավելանան մինչև ՀՆԱ-ի 24.6 տոկոս, իսկ կապիտալ ծախսերի նախատեսված ցուցանիշը համեստ է՝ ՀՆԱ-ի 2.2 տոկոս: Բյուջետային նման շրջանակը ցածր աճի միջավայրում ռիսկային է, քանի որ ընթացիկ սոցիալական ծախսերին բաժին ընկող բարձր տեսակարար կշիռը (ընդհանուր ծախսերի 47.0 տոկոսը) մանևրելու հարկաբյուջետային փոքր հնարավորություն է թողնում, իսկ անվանական թիրախներին համապատասխան հարկեր հավաքելու փորձերն տնտեսական աճն էլ ավելի կկաշկանդեն:

2015 թ. հունվար-փետրվար ամիսներին հարկային եկամուտներն աճեցին 2.6 տոկոսով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ), իսկ մաքսատուրքերի մուտքերն ավելացան 38.9 տոկոսով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ): Մշակող արդյունաբերության թողարկման տեմպի դանդաղումը և ներմուծման ցածր ցուցանիշները շարունակում են ազդել հարկային եկամուտների կառուցվածքի վրա: 2015 թ. առաջին երկու ամիսների ընթացքում հարկային եկամուտներն ամբողջովին պայմանավորված էին ուղղակի հարկերով, որոնք 2.6 տոկոս կազմող ընդհանուր աճին նպաստել են 4.1 տոկոսային կետով: 2015 թ. հունվարից սկսած Հայաստանը սկսեց Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) բաշխման սխեմայի համաձայն ստանալ մաքսատուրք՝ ընդհանուր միջոցների 1.13 տոկոսի չափով: Հունվար-փետրվար ամիսներին մաքսատուրքերից մուտքերն աճեցին 38.9 տոկոսով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)՝ հասնելով 9.0 միլիարդ ՀՀ դրամի (18.9 միլիոն ԱՄՆ դոլար):

2015 թ. հունվարին արտահանումն ու դրամական փոխանցումները նվազեցին՝ պայմանավորված Ռուսաստանի տնտեսության կատարողականի վատթարացմամբ, որը Հայաստանի արտահանման 20 տոկոսի ուղղությունն է և դրամական փոխանցումների 70 տոկոսի աղբյուրը: Առևտրի պակասուրդը կրճատվեց 38.7 տոկոսով՝ 2015 թ. հունվարին կազմելով 121.3 միլիոն ԱՄՆ դոլար՝ պայմանավորված ներմուծվող ապրանքների նկատմամբ ցածր պահանջարկով, անգամ արտահանման նվազման պայմաններում: Ապրանքների արտահանումը նվազեց 21.9 տոկոսով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)՝ կազմելով 75.6 միլիոն ԱՄՆ դոլար՝ արտացոլելով առևտրի հիմնական գործընկերների կողմից զսպված պահանջարկը, պղնձի միջազգային գների ձգձգվող անկումը և ԵՏՄ անդամ պետությունների հետ մաքսային ձևակերպումների ընթացակարգերի չլուծված խնդիրները: Վերջինիս հետևանքով դեպի ԵՏՄ արտահանումը կտրուկ նվազեց, որը 2015 թ. չնչին էր՝ 169,000 ԱՄՆ դոլար 2014 թ. հունվարի 16.8 միլիոն ԱՄՆ դոլար ցուցանիշի համեմատ: Արտահանման ընդհանուր ցուցանիշի նվազման 17.2 տոկոսը բաժին է ընկել դեպի ԵՏՄ արտահանման վատ արդյունքներին: Ապրանքների ներմուծումը 2015 թ. հունվարին

կազմեց 196.9 միլիոն ՀՀ դրամ՝ արձանագրելով 33.2 տոկոսի անկում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ): Ներմուծման ավելի ցածր ծախսերն արտացոլում են նաև Ռուսաստանի կողմից բնական գազի, նավթամթերքի և չհղկված ադամանդների արտահանման մաքսատուրքերից միակողմանի ազատումը:

Գծապատկեր 1. 2014 թ. -ին տնտեսական աճի տեմպը շարունակել է դանդաղել
(տարեկան տոկոսային փոփոխություն)



Աղբյուրը ՝ԱՎԾ

Գծապատկեր 2. 2014 թ. աճը պայմանավորված էր ծառայություններով և գյուղատնտեսությամբ
(տարեկան տոկոսային փոփոխություն)



Աղբյուրը ՝ԱՎԾ, Բանկի աշխատակիցների հաշվարկներ

Գծապատկեր 3. ՀՀ ԿԲ-ն դրամավարկային պայմանները խստացրեց՝ ի պատասխան ավելացող գնաճի
(տոկոս)



Աղբյուրներ ՝ ԱՎԾ, ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. Հետագա արժեզրկման սպասումները հանգեցրին դոլարայնացման աճի
(տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ, Բանկի աշխատակիցների հաշվարկներ

Գծապատկեր 5. Ապրանքների արտահանումը նվազեց բոլոր ապրանքախմբերում
(միլիոն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ԱՎԾ, Բանկի աշխատակիցների հաշվարկներ